իրավակարգավորումները չեն նախատեսել վերը նշված ժամկետը վերականգնելու հիմքեր և կարգեր:

Վերոնշյալի համատեքստում՝ Դատարանը փաստում է, որ հայցվորը հանդիսանում է իրավաբանական անձ և իր գործողություններն իրականացնում է իր մարմինների միջոցով, հետևաբար իրավաբանական անձի դեպքում որոշակի գործողության չկատարումը չի կարող պայմանավորվել սուբյեկտիվ հատկանիշներով և իրավաբանական անձին ազատել կոնկրետ պարտավորությունից, կամ այդ պարտավորության չկատարման պատճառների հարգելիության հիմք հանդիսանալ:

Վերոգրյալ պատճառաբանությունների համատեքստում՝ Դատարանը հայցը դիտում է անհիմն և մերժման ենթակա:

Դատարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը մերժվում է՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<ՀԱՅԿԱՐԼԻ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության՝ 26.09.2022թ. որոշումը վերացնելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ